ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պետության կարիքների համար պետական գնման)
"ԱրմենՏել" ՓԲԸ GSM շարժական կապի հետվճարային համակարգի ծառայությունների մատուցման
№ 1133005964 1132994951 պայմանագրի

ք. Երևան "31" 07 2013թ.

Հեռահաղորդակցության օպերատոր «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն իրեն շնորհամադրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), այսուհետ՝ «Օպերատոր»
ք.Երևան, ՇԿԲ ԿՏ ԿՎԶԾ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժին
(նշել մարզը, շրջանը ,քաղաքը)
ի դեմս լիազորված անձ՝ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյանի
(անուն, ազգանուն, պաշտոնը)
մի կողմից, և մյուս կողմից «Բաժանորդ» ՀՀ Սահմանադրական դատարան, ի դեմս
Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Հակոբյան, որը գործում է կանոնադրության հիման վրա,
(իրավաբանական անձի անվանումը,)
ք. Երևան, Բաղրամյան 10
(իրավաբանական հասցեն)

ելնելով պետական կարիքների համար գնումների օրենսդրական առանձնահատկություններից, ի լրումն "ԱրմենՏել" ՓԲԸ GSM շարժական կապի հետվճարային համակարգի ծառայությունների մատուցման պայմանների, Պատվեր-Դիմումի և Օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնք միասին հանդիսանում են "ԱրմենՏել" ՓԲԸ GSM շարժական կապի հետվճարային համակարգի ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի և սույն համաձայնագրի համաձայն Օպերատորը պարտավոր է "Բաժանորդին" մատուցել Պայմանագրով և սույն համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի հետվճարային համակարգի ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ Բաժանորդը պարտավոր է "Օպերատորին վճարել էլեկտրոնային հաղորդակցության էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի հետվճարային համակարգի ծառայությունների համար Պայմանագրով և սույն համաձայնագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:
2. Սույն համաձայնագրի համաձայն Օպերատորի կողմից Բաժանորդին վճարման ենթակա գումարը / պայմանագրի գինը/ կազմված է.

- Բաժանորդային վճարից՝ 690 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) տարեկան, որը հաշվարկվում և վճարվում է ամսական կտրվածքով՝ փաստացի մատուցված ծառայությունների վճարի հետ միաժամանակ, և
- Փաստացի մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների վճարից, որը հաշվարկվում ամսական կտրվածքով՝ համաձայն սույն համաձայնագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակի (նշված գները ներառում են ԱԱՀ):

3.Օպերատորն էլեկտրոնային փոստով Բաժանորդին է ներկայացնում սույն համաձայնագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ով և 3-ով ամրագրված օրինակելի ձևերի համապատասխան կազմված հանձնման-ընդունման արձանագրություն և հաշիվ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրվանից սկսած, սակայն ոչ ուշ, քան 25-ը:
*Տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա գումարը Բաժանորդը տրամադրում է որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

**նախատեսվում է << կառավարության 18/01/2002թ. թիվ 48-Ն որոշման 66-րդ կետով սահմանված պահանջի կատարման նպատակով:*
Եթե Օպերատորը Բաժանորդին մատուցում է նաև այլ պայմանագրերով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, ապա Օպերատորը կարող է Բաժանորդին ներկայացնել բոլոր

մատուցված ծառայությունների գծով մեկ միասնական հանձնման-ընդունման արձանագրություն, ինչպես նաև մեկ միասնական հաշիվ՝ կից ըստ պայմանագրերի առանձնացված հաշիվներով:

4. Բաժանորդը Բաժանորդային վճարն ու մատուցված ծառայության արժեքը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Օպերատորի հաշվարկային հաշիվ փոխանցելու միջոցով: Վճարումը համարվում է կատարված դրամական միջոցները Օպերատորի հաշվեհամարին մուտքագրվելու պահից:

5. Մատուցված Ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա: Նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են Բաժանորդին մատուցվող Ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց:

6. «Օպերատորի» կողմից Բաժանորդի բաժանորդային վճարը և մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները «Բաժանորդը» պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ, բացառությամբ դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար վճարման ենթակա գումարների, որը վճարվում է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին:

7. Օպերատորը պարտավոր է սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

8. Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Բաժանորդի կողմից սույն համաձայնագրի 6-րդ կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն համաձայնագրի 11 կետով նախատեսված տույժը:

9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում «Օպերատոր»-ից գանձվում է տուգանք՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

10. Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում «Օպերատոր»-ից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

11. Բաժանորդի կողմից սույն համաձայնագրի 6-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Բաժանորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

12. Պայմանագրի և սույն համաձայնագրի փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքման միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մաս, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքի:

Եթե սույն համաձայնագրում և սույն համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակում/սակագներում առկա է սակագին, որը հաստատված է համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի և/կամ պետական լիազորություններով օժտված մարմնի կողմից և ՀՀ օրենսդրության համաձայն կարող է փոփոխվել այդ մարմնի կողմից, ապա սույն համաձայնագիրը դրա անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում և սույն համաձայնագրում ամրագրված տվյալ սակագնի մասով համարվում է փոփոխված՝ համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի և/կամ պետական լիազորություններով օժտված մարմնի կողմից նոր սակագին հաստատելու և Ընկերության կողմից այն ներդնելու օրվանից:

Եթե Օպերատորը պետական մարմնի որոշման համաձայն ի կատարումն այդ որոշման պարտադրված իրականացնի փոփոխություն սույն համաձայնագրում և սույն համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակում/սակագներում, ապա սույն համաձայնագիրը դրա անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում և սույն համաձայնագրում ամրագրված տվյալ սակագնի մասով համարվում է փոփոխված՝ Ընկերության կողմից ի կատարումն պետական մարմնի որոշման նոր սակագին հաստատելու և Ընկերության կողմից այն ներդնելու օրվանից:

13. Պայմանագրի լուծումը կամ դադարումը կամ կասեցումը հիմք չէ Կողմերի ֆինանսական պարտավորությունների համապատասխանաբար դադարեցման կամ կասեցման: Ֆինանսական պարտավորությունների մասով պայմանագրի գործում է մինչև դրանց ամբողջ ծավալով կատարումը:

14. Եթե տվյալ տարում Բաժանորդի համար բյուջեով նախատեսվել են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա հաջորդող տարիներին Ծառայությունների մատուցումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու

միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:
15. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս: Սույն համաձայնագրում և դրա անբաժանելի մաս կազմող հավելվածներում և Պայմանագրում ամրագրված դրույթների միջև տարընկալումներ առաջանալու դեպքում, գերակայությունը տրվում է սույն համաձայնագրում ամրագրված դրույթներին:
16. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից, գործում է -------թ. Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ մինչև Պայմանագրի գործողության ավարտը:

15. Կողմերի իրավաբանական հասցեները

«Օպերատոր»

ՇԿԲ ԿՏ ԿՎԶԾ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյան

պաշտոն,անուն,ազգանուն

հարկ վճարողի հաշվառման համարը

0	2	5	0	0	0	5	2

ք. Երևան, Ամիրոնյան 2

հասցե, հեռախոս

ՀայԷկոնոմԲանկ 163004038861 հ/հ

բանկային ռեկվիզիտներ

ստորագրություն Կ.Տ

«Բաժանորդ»

ՀՀ Սահմանադրական դատարան, ի դեմս **Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Հակոբյան**

Հարկ վճարողի հաշվառման համարը

0	0	0	1	8	3	5	7

հ/հ

Հաշվի առաքման հասցե **ք. Երևան, Բաղրամյան10 («ԱրմենՏել» ՓԲԸ համապատասխան հնարավորության առկայության դեպքում)**

○ առձեռն, բաժանորդների սպասարկման կետում.

Էլ. փոստի հասցե՝ anri-marutyan@mail.ru
կոնտակտային հեռախոս 099400009

ստորագրություն Կ.Տ

Հավելված 1

«07» 02.2013թ. կնքված թիվ 113300596 (113294951) լրացուցիչ համաձայնագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ

Ծառայության տեսակ	Քանակ	Բաժանորդային վարձ ներառյալ ԱԱՀ	Քանակ/ծավալ	Տարեկան գումար ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ
բաժանորդային վճար ըստ պլանի հիմնական VIP գործընկեր	հատ	500	107	642 000
բաժանորդային վճար ըստ պլանի Բիզնես Շփում	հատ	2000	1	24 000
բաժանորդային վճար ըստ պլանի Սմարթ	հատ	350	4	16 800
բաժանորդային վճար Իմ մեղեդի	հատ	200	3	7 200
Ընդամենը				690 000

«Օպերատոր»

ՇԿԲ ԿՏ ԿՎԶԾ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյան

պաշտոն,անուն,ազգանուն

ք. Երևան, Ահարոնյան 2

հասցե, հեռախոս

ՀայէկոնոմԲանկ 163004038861 հ/հ

բանկային ռեկվիզիտներ

ստորագրություն Կ.Տ

«Բաժանորդ»

ՀՀ Սահմանադրական դատարան, ի դեմս Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Հակոբյան

Հարկ վճարողի հաշվառման համարը

0	0	0	1	8	3	5	7

հ/հ

Հաշվի առաքման հասցե ք. Երևան, Բաղրամյան10 («ԱրմենՏել» ՓԲԸ համապատասխան հնարավորության առկայության դեպքում)

○ առձեռն, բաժանորդների սպասարկման կետում.

էլ. փոստի հասցե՝ anri-marutyan@mail.ru

կոնտակտային հեռախոս 099400009

ստորագրություն Կ.Տ

951

59%